

ԻՐԱՆԱ-ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ*

Իրանա-Հնդկաստանի հայոց թեմը, Նոր Ջուղա քաղաքով, մինչև 1630-ական թվականները ճանաչված էր առավելապես որպես տնտեսական կենտրոն: Աշխատասեր ու ձեռներեց ջուղայահայերը, իրենց ձեռքում կենտրոնացնելով Պարսկաստանի ողջ առևտուրը, կարճ ժամանակից հետո հսկայական շահույթներ ունեցան: Ստեղծված նյութական միջոցներից նրանք հատկացումներ էին անում թեմի եկեղեցական ու դպրոցական-կրթական կարիքների համար: Ջուղայահայերը ընդհանուր հայության մեջ ևս մինչև վերջ պահեցին իրենց համբավն ու ազդեցությունը՝ նյութապես առատ օժանդակություն ցուցաբերելով ազգային եկեղեցական բոլոր գործերում: Լավ հասկանալով լուսավորության դերն ու արժեքը Հայաստանյայց Եկեղեցու և համայն հայ ժողովրդի համար, մյուս կողմից ջուղայեցիները կգում էին, որ այն անհնար է իրագործել Մայր Հայրենիքում և կամ Պարսկաստանում, որովհետև «մի երկիր, որ այնքան հեռու էր լուսավոր աշխարհից, մոռացված, կուրկ հաղորդակցության ճանապարհներից և ամեն տեսակ ապահովությունից, չէր կարող լուսավորության մասին մտածել[28]:

Պարսկահայ գաղութի լուսավորության, կրթական ու դպրոցական գործը գլուխ բերելու նպատակով ջուղայահայերը միամտություն ունեցան բանակցությունների մեջ մըտնելու Հռոմի պապի հետ՝ Հռոմում հայկական դպրոց և տպարան բանալու համար: Եվրոպայի կենտրոնում բացվելիք այդ դպրոցում պիտի ուսանելու ուղարկվեին մինչև 400 հայ երեխաներ[29]: Հետագայում, երբ տեղի ունեցավ լեհահայերի կաթոլիկացման դժբախտ դեպքը, ջուղայահայերը սթափվեցին և համոզվեցին, որ անհնար է Հռոմի Աթոռի միջոցով դպրոցական գործը գլուխ բերել: Վերջնականապես հրաժարվելով Եվրոպայի որևէ կենտրոնում հայկական դպրոց ունենալու մտքից՝ նրանք նյութական առատ միջոցներով օգնեցին Խաչատուր վրդ. Կեսարացուն Իրանա-Հնդկաստանի առաջնորդանիստ Ամենափրկչյան վանքում հիմնելու նշանավոր այն դպրոցը, որը տվեց հայ եկեղեցականների մի քանի փայլուն սերունդ: Հենց այդ դպրոցի ջեմից ելած եկեղեցականներն էին, որ իրենց ուսերին տարան այդ օրերի հայոց Եկեղեցու և ազգի լուսավորության հոգսը: Ամենափրկչյան վանքի դպրոցը, ըստ երևույթին, մեր իրականության մեջ Սյունյաց նշանավոր դպրոցից հետո կարելի է համարել ամենահեղինակավորը: Շրջանավարտ սաներից շատերը դուրս եկան Իրանա-Հնդկաստանի թեմի շրջանակներից՝ դառնալով համահայկական կրոնական ու ազգային գործիչներ: Հիշենք թեկուզ Փիլիպպոս, Հակոբ, Աղեքսանդր կաթողիկոսներին, Դավիթ եպիսկոպոսին, որը կառուցեց նաև Ամենափրկչյան վանքը, հայ տպագրության երկու մեծ երախտավորներ՝ Ոսկան վրդ. Երևանցուն և Հովհաննես վրդ. Ջուղայեցուն, ճանաչված փիլիսոփա և ճարտասան Սիմեոն «նրբամիտ և քաջ հռետոր վարդապետին», Հովհաննես Մրքուզ վարդապետին, Խաչատուր վրդ. Ջուղայեցուն և շատ ու շատ ուրիշների: Հենց այս եռամեծ գիտնական վարդապետներն էլ դարձան հայ մատաղ սերնդի դաստիարակիչներն ու պարսկահայ մշակույթի ստեղծողները: Մշտապես իր մեջ կրելով հայրենի երկ-

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1983 թվականի № 9-ից:

[28] Լեո, Հայկական տպագրություն, Թիֆլիս, 1904, էջ 71:

[29] Այս մասին տես Հայր Ներսես վրդ. Ակինյան, Մովսէս Գ Տաթևացի կաթողիկոս, Վիեննա, 1936:

րի և Մայր Աթոռի նվիրական ջունչն ու հոգին, Ամենափրկչյան վանքը Խաչատուր վրդ. Կեսարացի բաղմաջնորհ առաջնորդի օրերից սկսած դարձավ հայ մշակույթի աչքի ընկնող կենտրոն: Այն մեր մշակույթի պատմության մեջ հայտնի է նաև որպես հայ գրչության կարևոր օջախ: «Զուղայի հիմնարկության հետ միասին,—գրում է մեծանուն պատմաբան Լեոն,—հիմնադրվեց և Ամենափրկչյան վանքը: Այնտեղ ահա մուտք գործեց Սյունյաց դպրոցը, որը, ինչպես կտեսնենք, պատրաստեց մի շարք երախտավոր գործիչներ: Չի կարելի երևակայել ԺԷ դարի հայության մեջ կրթական-մտավորական գործունեություն առանց Զուղայի հզոր աջակցության և խրախուսանքի[30]:

Ասիայի խուլ ու հետամնաց մի ծայրամասում շնորհաշատ մի քանի սերնդի հայ եկեղեցականների ձեռքով Նոր Զուղայի առաջնորդանիստ Ամենափրկչյան վանքում ստեղծվեց հայկական ինքնատիպ մի մշակույթ: Հենց այդ վանականներն էին, որոնք, առանց սեփական աչքերով տեսնելու եվրոպական տպագրական մեքենաների հրաշքը, իրենք ևս ինքնամոռաց ու տքնաջան աշխատանքի շնորհիվ կարողացան ստեղծել տպարան, որի մամլիչների տակից իրար ետևից դուրս էին գալիս մաշտոցյան մատյանները: Դժվար է գերագնահատել կուտ հայկական այդ գյուտի օգուտը Իրանա-Հնդկաստանի թեմի հայոց և Մայր ժողովրդի մշակույթի ու լուսավորության գործի հետագա զարգացման համար ընդհանրապես: Լավագույնս օգտվելով Նոր Զուղայի տնտեսական ապահով վիճակից՝ Իրանա-Հնդկաստանի հոգևոր առաջնորդները Ամենափրկչյան վանքը դարձրին հավատքի և հայ մշակույթի գանձարան: Պահելով Ավետյաց երկրից տարած հայ դպրոցի և մշակույթի դարավոր ավանդները, նոր պայմաններում իրանահայությունը ստեղծեց ինքնատիպ հայեցի մի մշակույթ՝ դրանով իսկ հարըստացնելով մեր հավարամյա դպրությունը: Ամենափրկչյան վանքի նշանավոր մատենադարանը, որտեղ առ այսօր մեծ խնամքով պահվում են 600-ից ավելի հայերեն արժեքավոր ձեռագրեր, տասնյակ հավարավոր արխիվային անգնահատելի փաստաթղթեր և տպագիր գրքեր, համարվում է մեր մշակույթի հարուստ գանձարաններից մեկը:

ԺԸ դարում նոր դպրոցներ են բացվում թեմի մյուս քաղաքներում և գյուղերում, որոնք ապահովում են հայ մատաղ սերնդի հայեցի դաստիարակության գործը: ԺԹ դարում, շնորհիվ հայրենասիրական կազմակերպությունների և անհատ նվիրատուների նյութական օժանդակության, Իրանա-Հնդկաստանի թեմում բացվում են ժամանակակից մանկավարժական պահանջները բավարարող մի քանի դպրոցներ ևս: Հիշատակության արժանի է Գեորգ Դ կաթողիկոսի օրոք Նոր Զուղայում բացված «Ազգային կենտրոնական դպրոցը» «ի թագաւորութեան վեհափառ Նասրէտին շահին պարսից և ի հայրապետութեան Տ. Տ. Գէորգայ սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց և առաջնորդութեան Նոր Զուղայի Տ. Գրիգորիսի արքեպիսկոպոսի»[31]:

1899 թվականին Լավարյան ճեմարանի հանգուցյալ վերատեսուչ Գևորգ Քանանյանի հիշատակին նրա կինը՝ Վառվառե Քանանյանը, Նոր Զուղայում կառուցում է «Քանանյան ազգային դպրոց»-ը: «Ի հայրապետութեան Տ. Տ. Մկրտիչ սրբազնագոյն կաթողիկոսի Ամենայն Հայոց, կառուցաւ դպրոցս յանուն և ի յիշատակ հանգուցեալ գիտնականի Գէորգայ Քանանեանի՝ վերատեսչի Լազարեան ճեմարանի՝ արդեամբք և ծախիւք վսեմաշուք տիկնոջն նորին Վառվառէի Քանանեան»[32]: Արդարորեն պետք է ասել, որ Իրանա-Հնդկաստանի թեմի բոլոր մեծ ու փոքր դպրոցները, ինչպես նաև մշակույթի օջախները լավագույնս կատարեցին իրենց առջև դրված ծրագիրը՝ հայ մատաղ սերնդին դաստիարակելով հայրենասիրության և եկեղեցասիրության ոգով: Հայաստանյայց Եկեղեցուն, հայ դպրոցին և հայ մշակույթի օջախներին ենք պարտական, որ պարսկահայությունը արևածաղկի նման իր հայացքը մշտապես պահեց դեպի հայրենիք և Ս. Էջմիածին, այդ սրբություններով ջերմացնելով իր հոգին ու միտքը, քաջ գիտենալով, որ օտար արևի տակ հայ ապրելու և հարատևելու ավիշը նա կարող է ստանալ միմիայն հայրենիքից և Մայր Աթոռ Ս. Էջմիածնից: Իրանա-Հնդկաստանի թեմը մշտապես եղել ու մնում է Ամենայն Հայոց հայրապետների ուշադրության կենտրոնում: Ս. Էջմիածնի գահակալները երեք ու կես դար շարունակ Լուսավորչի իրենց գահի բարձունքից նախանձախնդրորեն հետևել են, որպեսզի չխանգարվի այդ թեմի հայ ժողովրդի ոգևորությունը: Հայոց հայրապետները թեմի հիմնադրման օրից ամեն պատեհ առիթով անձամբ Ս. Էջմիածնից ս. մեռոն և օրհնություն են տարել հայրենակուրկ ու ավանդապահ հայության այդ հատվածին: 1604 թվականին իր հոտի հետ Մայր Աթոռից կամավոր աք-

[30] Լեո, Հայկական տպագրություն, Թիֆլիս, 1904, էջ 177:

[31,32] Դպրոցաշինության վերաբերյալ այս արձանագրությունները տես **Երեմյան Ա**, Նոր-Զուղա, Նոր-Զուղա, 1915, էջ 44, 47, 49:

սոր գնաց նաև ինքը՝ Դավիթ Դ (1590—1629) կաթողիկոսը, որպեսզի կիսի իր հոգևոր զավակների անսահման վիշտը: «Ի ժամանակին՝ յորում շահն զմեծ սուրգունն արար և զազգս Հայոց վարեալ տարաւ յԱսպահան, գնաց ընդ նոսին և Դաւիթ կաթուղիկոսն»[33]:

Հայրապետական երկրորդ այցելությունը Իրանա-Հնդկաստանի հայոց թեմին տեղի է ունեցել 1638 թվականին Փիլիպպոս Աղբակեցի (1633—1655) կաթողիկոսի կողմից: Օգտագործելով իր հայրապետական հեղինակությունը՝ նա Նոր Ջուղայից Մայր Աթոռ վերադարձրեց Ս. Լուսավորչի Աջը, որը 1616 թվականին Շահ-Աբասի կողմից Սպահան էր տարվել՝ գաղթական հայությունը պարսկական հողին կապելու համար: «Եւ ի 1087 թուոջ (1638) մերում Տէր Փիլիպպոս սրբասէր կաթողիկոսն եկալ ի դուռն շահ Սեֆի արքայի յԱսպահան քաղաք. յորմէ խնդրեալ զԱջ սրբոյն Գրիգորի բազմաչարչար հօրն մերոյ՝ եւ լուսատուի ազգս մերոց, որ ընդ քարանց սրբոյ Էջմիածնի բերին յԱսպահան՝ հրամանաւ Աբասայ առաջնոյ խորամանկ արքայի: Զոր մեծաւ փափագանօք յորմէ հայցեալ, եգիտ եւ եհաս ըղձալւոյն իւրոյ. նորին հրամանաւ բարձեալ զԱջ նորա շնորհաբաշխ՝ ի նորոյ Ջուղայէ՝ ընդ իւր վերստին տարաւ ի սուրբ մաքրածին Մայր մեր Էջմիածին»[34]:

Քսան տարի անց, 1658 թվականին, Իրանա-Հնդկաստանի հայոց տիրախնամ թեմին հովվապետական այցելություն է տալիս Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսը (1655—1680): Առաքել վրդ. Դավրիժեցին Հայոց Հայրապետի հովվապետական այդ այցելության մասին գրում է. «Եւ ժամանակս յոր այժմ կամք մեք, է թուականն մեր հայոց ՌՃԷ (1107), (1658), յորում և զպատմութիւնս շարադրեալ գրեցաք, պատահեցաւ մեզ գալ ի մեծահանդէս քաղաքն Ասպահան քանզի եկեալ էր աստ խոհական և մեծահոգի և արժանաժառանգ Հայրապետն Ամենայն Հայոց Կաթողիկոսն սրբոյ Էջմիածնի Տէր Յակոբ առ ի տեսութիւն և յայցարարութիւն բանաւոր հօտին Քրիստոսի, որ հաւատացաւ նմա, այլև ի նուիրակութիւն սրբոյ Էջմիածնի»[35]:

ԺԷ դարի 60-ական թվականներից հետո, քաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով, Հայոց Հայրապետները հնարավորություն չեն ունեցել Ս. Էջմիածնից անձամբ իրենց օրհնությունը տանելու տիրախնամ այդ թեմին: Հոգևոր կենդանի կապը Մայր Աթոռի հետ անխափան իրականացվել է թեմակալ հոգևոր առաջնորդների և հայրապետական նվիրակների միջոցով: Երեք հարյուր հիսուն տարի բազում տառապանքներով, մաքառումներով, նահատակություններով, հերոսական կյանքով ապրեց իրանահայությունը՝ մշտապես ականջալուր լինելով հայրենիքից և Մայր Աթոռ Ս. Էջմիածնից եկած խաբրիկներին:

Դժբախտաբար վերջին երկու-երեք տասնամյակների ընթացքում Ս. Էջմիածնի համար որոշակի դժվարություններ ստեղծվեցին պարսկահայ թեմերում՝ առաջնորդի ընտրության հարցում: Մայր Աթոռը, հարգելով պարսկական կառավարության կողմից հաստատված օրենքը հայոց հոգևոր առաջնորդի ընտրության մասին, Ս. Էջմիածնի հետ իրանահայ թեմերի հոգևոր կապը ժամանակավորապես իրագործում էր իրանահայ թեմական խորհուրդների միջոցով, մինչև որ Ամենայն Հայոց Հայրապետին կհաջողվեր վերջնականապես լուծել թեմակալ առաջնորդների հարցը: Ցավալի է, որ ստեղծված ժամանակավոր այդ դժվարություններից օգտվեցին մեր ժողովրդի իրական շահերից հեռու կանգնած հայանուն որոշ մարդիկ: Անտեսելով ողջ իրանահայության կամքը և շահերը՝ ինչ-ինչ պատճառաբանությամբ և արտաքին ճնշումների ներքո նրանք խզեցին երեք հարյուր հիսուն տարվա անցյալ ունեցող թեմի հոգևոր կանոնական կապը Ս. Էջմիածնի հետ: Նրանց ձգտումն է մոռացնել տալ պարսկահայությանը իր անցյալը՝ արհեստական կերպով նրանց հեռու պահելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնից: Հիմք ու ապագա չունեցող այդ բոլոր փորձերը ժամանակավրեպ են, որքան էլ դրանք պսակվեն ժամանակավոր «հաջողություններով»: Հակաեկեղեցական և հակաազգային այդ գործելակերպը գալիս է կտրելու մեր ժողովրդին իր հազարամյա արմատներից:

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետը 1958 թ. հայ հեռագրական գործակալության թղթակցի հետ ունեցած զրույցի ժամանակ նրա այն հարցին, թե՝ ի՞նչն է պատճառը Անթիլիասի ոտնձգության, պատասխանել է. «Դա ոտնձգություն է մեր Եկեղեցու կանոնական միության և ներքին խաղաղության հակառակորդների կողմից, որոնք փորձում են պառակտել և թուլացնել մեր ս. Եկեղեցին և հայ ժողովրդի հոգևոր-ազգային միասնությունը և որոնց հլու կամակատարն է դարձել Անթիլիասի հոգևոր իշխանությունը: Այս դավադրության նպատակն է՝ ցույց

---

[33] **Առաքել Դավրիժեցի,** Պատմություն Առաքել Դավրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ 202:

[34] **Խաչատուր վրդ. Ջուղայեցի,** Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 140:

[35] **Առաքել Դավրիժեցի,** Պատմություն Առաքել վրդ. Դավրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ 196:

տալ, թե Ս. Էջմիածինը քաղաքական վտանգավոր մի կենտրոն է և հետևաբար, այն ս. Աթոռին հոգեպես հավատարիմ բոլոր հայերը կասկածելի պետք է նկատվեն Արևմուտքի մեջ»:[36] Ազգային խղճից դատարկված այդ մարդկանց վրպարտանքները հանդեպ Մայր Աթոռի, արեգակին ցեխ նետելու նման փորձեր են: Անցյալում էլ օտար բռնակալների կողմից ինչեր ասեք չի քաշել Մայր Աթոռը: Ինչ վոհաբերություններ հանձն չի առել Մայր Աթոռը հանուն իր հոտի ամբողջ ու անվնտանգ պահպանման:

Ինչպես դարեր շարունակ, նաև այսօր Հայ Առաքելական Եկեղեցու և հայ ժողովրդի միակ ընդհանրական հայրապետական Աթոռը եղել ու մնում է Ս. Էջմիածինը: «Ի քո իջեալ տեղի վԱթոռ Հայրապետի մեր հաստատեա: Զերկարութիւն կենաց Հօր մեր Աստուած ապգեաց, շնորհեա պետին մեր հարց, որ վմեկ հովուէ»:

ԳԱՎԱՌԱՆԱԳԻՐՔ ԻՐԱՆԱ-ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՑ

Պատմական այս թեմում 376 տարիների ընթացքում պաշտոնավարել են շուրջ երեսուն թեմական առաջնորդներ: Ստորև ներկայացնում ենք ճշտված ցանկը երանաշնորհ սրբական այդ առաջնորդների, որոնք երեք ու կես դար շարունակ ինքնամոռաց, եկեղեցաշեն ու հայրենաշեն աշխատանքով հովվեցին պարսկահայ ավանդապահ ու հայրենասեր հայությանը: Մշտապես ստանալով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գործնական օգնությունը՝ իրանահայությունը իր հոգևոր առաջնորդների ղեկավարությամբ ոչ միայն սրբությամբ պահեց հայրենական դարավոր ավանդները, այլև նոր պայմաններում հայրենիքի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ գործնական կապի իրականացումը գտավ միայն սրբական մեր Եկեղեցուն կառչած մնալու մեջ: Շնորհիվ իր ավանդական հայրենասիրության և եկեղեցասիրության, իրանահայությունը կարողացավ դիմագրավել քաղաքական ու կրոնական բոլոր այն հալածանքներն ու դժվարությունները, որ այնքան առատորեն բաժին ընկան իրեն: Քաղաքաբնակ հայության նյութական օժանդակությամբ Իրանա-Հնդկաստանի թեմի ժրաջան և ուսումնասեր առաջնորդները Նոր Ջուղայի առաջնորդանիստ Ս. Ամենափրկչյան վանքը դարձրին ոչ միայն հոգևոր կենտրոն, այլև մտքի դարբնոց: Բացվեցին դպրոցներ, առաջնորդարանին կից ստեղծվեց մատենադարան, վանքում հաստատվեց նաև տպարան, որն ամբողջ Արևելքում առաջինն էր: Այս բոլորը նախադրյալներ հանդիսացան, որ Նոր Ջուղայում, Ս. Ամենափրկչյան վանքում ստեղծվի նաև ինքնատիպ հայեցի մի մշակույթ, որը եկավ հարստացնելու հպարտամյա հայ հոգևոր մշակույթը:

Ա.—1605 թվականին վանգվածաբար Պարսկաստան պանդխտության քշված հայ ժողովրդի շուրջ 300 հազար վավակների հետ, ինչպես նշվեց, կամավոր աքսոր գնաց նաև Ամենայն Հայոց Դավիթ Դ Վաղարշապատեցի կաթողիկոսը (1590—1629), որին դժբախտ այդ օրերին ուղեկցում էր Մայր Աթոռի միաբաններից Տ. Մովսես անունով հեպահամբոյր մի եպիսկոպոս: Գաղթականության տեղ հասնելուց հետո Դավիթ Դ կաթողիկոսի կողմից Տ. Մովսես եպիսկոպոսը նշանակվում է պարսկահայոց առաջնորդ, որը «յետ փոքու միջոցի բարուք կառավարութեան հայրենակորոյս հօտին՝ կնքէ զընթացս մահկանացու կենաց իւրոյ, ընդ ցաւօք տարեգրութեան սրտի» (տես Խաչկեան Հ., Գաւազանագիր, Կալկաթա, 1876, էջ 2):

Բ.— Տեր Մեսրոպը (եպիսկոպոս) հիշատակվում է 1613 թվականից:

Գ.— Տ. Խաչատուր վրդ. Կեսարացի (1620—1646), որպես Ս. Էջմիածնի նվիրակ, այցելում է Նոր Ջուղա, ս. մեռոն բաշխելու և մխիթարելու գաղթական հայությանը: Ընդառաջելով իրանահայ ժողովրդի խնդրանքին՝ Տ. Մովսես Գ Տաթևացի կաթողիկոսը (1629—1632) Խաչատուր վրդ. Կեսարացուն հաստատում է առաջնորդ: Բավմաբեղուն այս առաջնորդը, սնված ու դաստիարակված լինելով Ս. Էջմիածնի և Սյունյաց դպրոցի ավանդություններով, Իրանա-Հնդկաստանի թեմում ծավալում է եկեղեցաշեն ու ազգաշեն հսկայական աշխատանք: Խաչատուր վրդ. Կեսարացու մեղվաշան աշխատանքի շնորհիվ առաջնորդանիստ Նոր Ջուղայի Ամենափրկչյան վանքում բացվում է դպրոց, որը պատմության մեջ հայտնի է և հիշվում է նաև որպես «համալսարան»: Այս դպրոցի շրջանավարտներից էին Տ. Տ. Փիլիպպոս, Հակոբ, Աղեքսանդր Ամենայն Հայոց Կաթողիկոսները, Խաչատուր վրդ. Ջուղայեցին, Ոսկան վրդ. Երևանցին, Հովհաննես վրդ. Ջուղայեցին և ուրիշներ: Նշանավոր այս առաջնորդի ժամանակ է, որ 1638 թվականին, Իրանա-Հնդկաստանի առաջնորդարանին կից հիմնադրվեց առաջին ինքնահնար մի տպարանը:

Դ.— Տ. Դավիթ հրեշտակակրոն եպիսկոպոս (1652—1683): Աշակերտել է Խաչատուր վրդ. Կեսարացուն: Իր մեծ ուսուցչի մահից հինգ տարի հետո, 1652 թվականին Փի-

[36] Էջմիածին, 1957, ԺԱ, էջ 24—25:

լիպպոս կաթողիկոսի ձեռքով բարձրանում է եպիսկոպոսության աստիճանի և նույն թվականի ապրիլի 23-ի հայրապետական կոնդակով նշանակվում է Իրանա-Հնդկաստանի թեմակալ առաջնորդ: «Յիսուսի Քրիստոսի ծառայ Փիլիպպոս Կաթուղիկոս Ամենայն Հայոց.... Աստուածապահ քաղաքիդ Սպահանու ժողովրդեան մերում որ ի Զուղայ... եւ ընդ օրինութեանս ծանիք սիրելիք մեր ի Տէր, վի ըստ Առաքելոյ բանին՝ հոգք ամենայն եկեղեցեաց ի մեզ ունիմք... վասն որոյ և մեր տեսեալ պպակասութիւն եկեղեցեաց ձերոց որ այսքան ժամանակ է որ լուսատոր հոգի Խաչատուր վարդապետն առ Աստուած է փոխեր, դուք առանց առաջնորդի էք, ձեռնադրեցաք վիոգևոր որդին մեր Դաւիթ վարդապետն, և առաքեցաք ձեզ հովիւ և առաջնորդ, և տուաք նմա իշխանութիւն առաջնորդական, որ հովուեսցէ զձեզ...: (Տէր-Յովհաննեանց Յ., Պատմութ. Նոր Զուղայու, հատ. Բ., էջ 30, Նոր Զուղա, 1881):

Ե.— Տ. Ստեփանոս եպիսկոպոս (1684—1695): 1688 թվականին կաթոլիկ քարոզիչները, հատկապես Հիսուսյանները, իրենց քայքայիչ գործունեությամբ վրդովում են իրանահայության կյանքը: Ստեփանոս եպիսկոպոսին հաջողվում է կաթոլիկ քարոզիչներին Իրանա-Հնդկաստանի թեմի սահմաններից վտարել և վերականգնել թեմի անդորրը:

Զ.— Տ. Աղեքսանդր եպիսկոպոս Զուղայեցի (1699—1706): 1706 թվականին ընտրվում է Ամենայն Հայոց Կաթողիկոս (1706—1714) և նույն թվականին էլ թողնում առաջնորդական պաշտոնը Մայր Աթոռ տեղափոխվելու համար: Աղեքսանդր Զուղայեցին Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելուց հետո էլ շատ ջերմ կապերով կապված մնաց պարսկահայության հետ: Այդ մասին են վկայում նրա բազմաթիվ կոնդակներն ու նամակները՝ ուղղված Իրանա-Հնդկաստանի թեմի առաջնորդին և ազգայիններին (Տես Տէր-Յովհաննեան Յ., Պատմ. Նոր Զուղայու, հտ. Բ., էջ 34):

Է.— Տ. Մովսես եպիսկոպոս Զուղայեցի (1706—1725): Սրա առաջնորդության տարիներին, 1722 թվականին, տեղի ունեցավ ավղանների հարձակումը Նոր Զուղայի վրա: Պարսկաստանի և մանավանդ Նոր Զուղայի ավերման պատճառով պարսկահայությունը այդ շրջանում երկրորդ գաղթականության ելավ: Այս գաղթականները հիմնականում հաստատվեցին Հնդկաստանում և Հեռավոր Արևելքի մի շարք երկրներում: Տ. Մովսես եպիսկոպոսի ժամանակ կառուցվեց Իրանա-Հնդկաստանի թեմի առաջնորդարանը, որը գոյություն ունի մինչև այսօր:

Ը.— Տ. Դաւիթ Բ Զուղայեցի (1725—1728): Սրա առաջնորդության ժամանակ վերանորոգվում է Ս. Ամենափրկչյան վանքը և ներսից նկարազարդվում:

Թ.— Տ. Աստվածատուր եպիսկոպոս Զուղայեցի (1729—1745):

Ժ.— Տ. Պողոս եպիսկոպոս (1749?—1752): Երեք տարի առաջնորդություն անելուց հետո 1752 թ. հրաժարվում է առանց որևէ դրական հիշատակություն թողնելու Իրանա-Հնդկաստանի թեմի պատմության մեջ:

ԺԱ.— Տ. Զաքարիա եպիսկոպոս Տփխիսեցի (առաջնորդության ճիշտ թվականը հայտնի չէ):

ԺԲ.— Տ. Գևորգ եպիսկոպոս Զուղայեցի (1754—1768):

ԺԳ.— Տ. Մկրտիչ եպիսկոպոս Զուղայեցի (1769—1787): Սրա առաջնորդության տարիներին կողոպտվում են Ամենափրկչյան վանքը և Նոր Զուղա քաղաքը: Այդ տարիներին Նոր Զուղան ուներ 24 հազար տուն: Արտաքին ու ներքին հարստահարությունների ու կողոպուտի պատճառով հայ ժողովրդի արտագաղթը Նոր Զուղայից այնպիսի ահավոր չափերի է հասնում, որ 24 հազար տուն ունեցող Զուղայից այդ տարիներին մնացել էր միայն 500 տուն: Տ. Գևորգ եպիսկոպոսի առաջնորդության տարիներին վանքի համար հիմնադրվում են մի քանի պտղատու այգիներ:

ԺԴ.— Տ. Հակոբ եպիսկոպոս Էջմիածնեցի (1788—1793):

ԺԵ.— Տ. Հարություն եպիսկոպոս Զուղայեցի (1801—1810):

ԺԶ.— Տ. Հովհաննես եպիսկոպոս Էջմիածնեցի (1812—1817): Որպես նվիրակ Ս. Էջմիածնից այցելում է պարսկահայոց և իր քաղցրաբարո բնավորության համար շատ է սիրվում ժողովրդից: Ժողովրդի անունից հատուկ խնդրանքով դիմում են Եփրեմ կաթողիկոսին, որը 1813 թվականի մարտի 8-ի կոնդակով Հովհաննես եպիսկոպոսին հաստատում է Իրանա-Հնդկաստանի թեմակալ առաջնորդ: Այս առաջնորդի ժամանակ բավական դժվարություններ են ստեղծվում պարսկահայության համար: Շնորհիվ սրբազան առաջնորդի շրջահայաց գործունեության՝ թեմի հայ ժողովուրդը վերծ է մնում վտանգից:

ԺԷ.— Տ. Կարապետ եպիսկոպոս Զուղայեցի (1818—1831): Թեմակալ առաջնորդ է հաստատվում Եփրեմ կաթողիկոսի կոնդակով: 1831 թվականին գաղութի ներսում սկսվում են որոշ անհանգստություններ, որոնք պատճառ են դառնում Տ. Կարապետ եպիսկոպոսի առաջնորդական պաշտոնից հրաժարվելուն:

ԺԸ.— Հ. Հովհաննես Բ եպիսկոպոս Բագրևանդցի (մականունը՝ քուրդ) (1832—1836): Ֆաթալի շահի մահից հետո պարսկահայության գլխին վտանգի նոր ամպեր են կուտակվում: Առաջնորդ սրբազանի ձեռք առած վինվորական միջոցների շնորհիվ խափանվում է վերահաս ճակատագրական վտանգը:

ԺԹ.— Տ. Խաչատուր Բ եպիսկոպոս Վաղարշապատցի (1833—1841): Սրա առաջնորդության տարիներին կաթոլիկ Եկեղեցին նորից փորձեր է կատարում Իրանա-Հնդկաստանի թեմի անդորրը խանգարելու: Սրբազան առաջնորդի ձեռք առած միջոցների շնորհիվ թեմը մնում է անվնաս:

Ի.— Տ. Հովհաննես Գ եպիսկոպոս Սուրենյան Ղրիմեցի (1841—1848): Առաջնորդական պաշտոնի մեջ հաստատվել է Հովհաննես Ը Կարբեցի կաթողիկոսի 1841 թվականի կոնդակով: Տ. Հովհաննես եպիսկոպոսը, լինելով գիտնական անձնավորություն, առաջնորդական պաշտոնի անցնելուց հետո, առաջին հերթին, առաջնորդանիստ Նոր Ջուղայում բաց է անում հոգևոր դպրոց, հիմնադրում է այգի և կատարում որոշ բարեկարգման աշխատանքներ:

ԻԱ.—Տ. Թադեոս եպիսկոպոս Բեկնազարյան (1851—1862): Առաջնորդական իր պաշտոնում հաստատվել է Տ. Ներսես Ե Աշտարակեցի կաթողիկոսի կոնդակով: Առաջնորդական 10 տարիների ընթացքում, շնորհիվ իր կազմակերպչական ընդունակությունների, Իրանա-Հնդկաստանի առաջնորդարանը ազատում է նախկինում ունեցած բոլոր պարտքերից և ստեղծում է նյութական բարվոք վիճակ Ս. Ամենափրկչյան վանքի համար: Բացի տնտեսական, ազգային-եկեղեցական, վանական-բարեհորոգչական խնդիրների լուծումից, թեմում բաց է անում նաև դպրոց: Օգտագործելով իր անձնական հեղինակությունը՝ սիրալիր հարաբերություններ է ստեղծում հայ համայնքի և պարսկական կառավարության միջև: Այդ շրջանում իշխանությունները այնքան էլ բարյացակամ չէին հայկական համայնքի նկատմամբ: Տ. Թադեոս եպիսկոպոսին հաջողվում է թեթևացնել նաև հայ համայնքից գանձվող պետական հարկերը:

ԻԲ.— Տ. Մովսես Բ եպիսկոպոս Գանձակեցի (հնարավոր չեղավ ճշտել այս եպիսկոպոսի առաջնորդական Աթոռը կբաղեցրած տարիները): Հավանաբար նշանակվել է Գեվորգ Դ կաթողիկոսի (1866—1882) կոնդակով 1866-ից հետո:

ԻԳ.— Տ. Գրիգորիս եպիսկոպոս Փիլիպեցի (նշանակվել է Մակար կաթողիկոսի (1885—1891) կոնդակով):

ԻԴ.—Տ. Եսայի արքեպիսկոպոս Աստվածատրյան (1891—1896): Եղել է բավական արդյունավոր առաջնորդ և համարվում է բարեկարգիչ:

ԻԵ.— Տ. Մաղաքիա եպիսկոպոս Տերունյան (1898—1900): Եպիսկոպոսության աստիճանի է բարձրացել Տ. Մկրտիչ Ա (Խրիմյան Հայրիկ) կաթողիկոսի կողմից և հաստատվել Իրանա-Հնդկաստանի թեմական առաջնորդ:

ԻԶ.—Տ. Բագրատ արքեպիսկոպոս Վարդապարյան (1901—1909): Հաստատվել է Խրիմյան Հայրիկի կոնդակով: Իրանահայերը այս առաջնորդին համարել են երկրորդ Խաչատուր վրդ. Կեսարացի: Բագրատ արքեպիսկոպոսի անմիջական ջանքերով Ամենափրկչյան վանքում 1905—1906 թվականներին կառուցվել է մատենադարանի նոր շենք: Առ այսօր այդ մատենադարանում պահվում են Իրանա-Հնդկաստանի թեմի պարծանքը հանդիսացող ձեռագիր, տպագիր գրքերի և արխիվային փաստաթղթերի ճոխ ու վերին աստիճանի հարուստ հավաքածուներ:

ԻԷ.— Տ. Սահակ արքեպիսկոպոս Այվատյան (1909—1912) հաստատվել է Խրիմյան Հայրիկի կոնդակով:

ԻԸ.— Տ. Եղնիկ ծ. վրդ. Երկարակեցյան (1912—1919):

ԻԹ.— Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մագիստրոս Մովսեսյան (հավանաբար մինչև 1930-ական թվերը?):

Լ.— Տ. Վահան ծ. վրդ., հետո՝ եպիսկոպոս Կոստանյան (1945—1952): Հաստատվել է Տ. Գևորգ Զ կաթողիկոսի կողմից:

1952 թվականից հետո, մինչև թեմի հափշտակումը, Իրանա-Հնդկաստանի թեմը կառավարվում էր թեմական խորհրդի կողմից: Հայաստանյայց Եկեղեցու օրենքների համաձայն ընտրված թեմական խորհրդի պատվարժան անդամները վայելում էին Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի անվերապահ վստահությունը:

ԵՂԻՇԵ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ